

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԹՌԻՉՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Դեկավարվելով** «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944 թվականի դեկտեմբերի 7-ի Զիկագոյի կոնվենցիայի N 19 հավելվածի պահանջներն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1460-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության թոհջային անվտանգության պետական ծրագիրը:

**Ելնելով** միջազգային ավիացիոն համակարգի անվտանգությունից և կարևորելով այդ համակարգի բոլոր մասնակիցների ջանքերը՝ ուղղված այդ անվտանգության բարձր մակարդակի պահպանմանը՝ Հայաստանի Հանրապետությունը ընդունում է այդ ուղղությամբ Միջազգային Քաղաքացիական Ավիացիայի Կազմակերպության և Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության փիլիսոփայությունն ու քաղաքականությունը:

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում առաջնահերթությունը տրված է թոհջների անվտանգությանը:**

Թոհջների անվտանգության ապահովումն ունի բացարձակ գերակայություն ավիացիայի բնագավառի գործունեության կոմերցիոն, սոցիալական և այլ բարկացուցիչների նկատմամբ ու այն պետք է շարունակականորեն ապահովվի՝ անկախ թոհջների ծավալի աճից:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է մշակել, ներդնել և շարունակականորեն բարելավել Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն գործառույթների անվտանգության բարձր մակարդակի ապահովմանն ուղղված ուղղականություններն ու քաղաքականությունը:

Սուաջնորդվելով «անվտանգությունը առաջնային է» սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունը որդեգրում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում ոիսկերի հնարավորինս ցածր մակարդակը ապահովելու քաղաքականությունը:

**Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է.**

- ներդնել և իրականացնել թոհջային անվտանգության արդյունավետ, փաստերի վրա հիմնված պոռակտիվ կառավարում,
- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ապահովված լինի անհրաժեշտ ռեսուրսներով և համապատասխան որակավորում ունեցող անձնակազմով՝ որպես

թոհքների անվտանգության վերահսկող մարմին իր պարտականությունները պատշաճ կատարելու նպատակով,

- ապահովել թոհքների անվտանգության բարձր մակարդակը, վերահսկել ավիացիոն կազմակերպություններում՝ համաձայն սահմանված չափանիշների և պահանջների ԹԱԿ համակարգերի ներդրման գործընթացը,
- ապահովել թոհքների անվտանգությանն առնչվող տեղեկատվության պահպանումը, խրախուսել այդպիսի տեղեկատվությունը ներկայացնողներին, ապահովել թոհքների անվտանգության տեղեկատվության փոխանակումը ավիացիոն իշխանությունների միջև և ավիացիոն բնագավառում,
- աջակցել Հայաստանի Հանրապետությունում թոհքների անվտանգության վերաբերյալ տեղեկատվության հավաքի և վերլուծության գործընթացին՝ ապահովելով տեղեկատվության պահպանումը և կիրառելով «արդարացի մշակույթի» սկզբունքը,
- ապահովել պատրաստվածությունը ավիացիայի ոլորտում ապագա զարգացումներին համապատասխան միջոցառումների մշակմամբ և պլանավորմամբ:

Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր  
քաղաքացիական ավիացիայի  
գլխավոր վարչության պետ

Ս. Ավետիսյան